



այն նիւթի աշխատութեան եղանակը, Այսու հանդերձ ամենէն առաջ Որդուատու վիճակն սկսաւ կանոնաւոր կերպով շինուած գործատուներ բանալ, բայց միայն մետաքսի բոժոժները պարզելու և կարժառաց վրայ փաթութելու համար: Երկու այսպիսի եւրոպական գործատուն կայ, մին Որդուատ քաղաքին մէջ և միւսը Ստորին Ագուլիսի մէջ: Որդուատու մետաքսափաթութ գործատան տէրերն են՝ բնիկ տեղացի Բաղտասար Պետրոսեանն և անդամէջցի կարապետ Բաբայեանը. այդ գործատան մէջ կը բանին անեփ մետաքս՝ միանգամայն անկէ հիւսելով թեզան և առէջք. և այս գործողութիւնը կը կատարուի՝ 60 անուոց, 700 թելափաթութ կարժառաց և երեք առանձին մետաքսորդ մեքենայից վերայ, զորս կը շարժեն չոգեշարժ մեքենայք, Գործատան շէնքը կը բաղկանայ երեք մեծամեծ սրահներէ, չորս սենեակներէ՝ զորս հաշուեկալ տեսչութիւնն կը գրաւէ, 18 ամբարանոցներէ և 7 ուրիշ բնակելու սենեակներէ. վարի յարկին մէջ բովանդակուած են երկու չոգեշարժ մեքենայք, յորոց մին 5 ձիու ուժ ունի և միւսն՝ 12: Այդ գործատան մէջ 1873 ին գարնան կ'աշխատէին 153 արուեստաւոր և 10 հասարակ գործաւոր, որոց թուոյն մէջ էին նաեւ 33 հայ կանայք. բաց ասկէ 10 կանայք բոժոժ ընտրելու և զատելու կը պարապէին և 10 աշխատաւորք այլ ուրիշ մանր գործոց: Արուեստաւոր արք ա. միւսը 5—10 բուբի կ'ընդունէին, իսկ կանայք՝ 4—7 բուբի, առանց կերակրի և բնակարանի:

Գործատան համար մեծաւ մասամբ անեփ բոժոժ կը գնեն, որը չորնայով իրենց կշռոյն գրեթէ  $\frac{2}{3}$  մասն կը կորսնցընեն: Մի պուգ բոժոժէն 6 փունտ զուտ մետաքս կը հանեն,  $2\frac{1}{2}$  փ. չուան կամ նարոտ և 1 փ. հասարակ դերձան: Սոյն գործատանս մէջ պատրաստուած մետաքսի մի պուգն ի Մոսկուա 450 բուբի կ'արժէ. իսկ բովանդակ գործատանս շինութեան համար՝ հանդերձ բոլոր մեքենայիւք և անուօք, ինչպէս որ տեսաք կ'ըսեն, 50,000 բուբի գացած է:

Ստորին-Ագուլիսի գործատունը Նուսնուսեան եղբարց ձեռքն է. որ կը բաղկանայ 4 սենեակներէ, 2 սրահակներէ և միջակ հրապարակէ մի, որոյ միջատեղը ջրոյ աւազան մի շինուած է. կրկին սրահակաց մէջ հաստատուած են 40 մետաքսափաթութ անիւներ՝ որ չոգեշարժ մեքենայով մի կը զառնան:

Հօս կ'աշխատէին 40 արուեստաւորք՝ հանդերձ 10 օգնականօք և 15 աշխատաւորք (10 կին, և 5 այր): Գործատանս աշխատութիւնը յունիսէն մինչև հոկտեմբեր ամիսը կը տեւէ, և այն միջոցին մէջ կը հանէ մինչև 49 պուգ զուտ մետաքս, որոյ մի պուգն ի Մոսկուա 250—350 բուբի կ'արժէ:

Բաց ասոնցմէ ամբողջ Որդուատու վիճակին մէջ կան 26 տեղական մետաքսափաթուղթ գործատուններ, որոցմէ մին Նուսնուսի մէջ է՝ 14 անուով, 17ը Որդուատ քաղաքին մէջ՝ 77 անուով և 8ը վերին-Ագուլիսի և վերակետի մէջ՝ 78 անուով։ Ասոնց ամենուն մէջ կ'աշխատէին 163 արուեստաւորք, 282 օգնականք և 29 հասարակ գործաւորք, որով ընդամենն բոլոր մետաքսափաթուղթ գործատանց մէջ կ'աշխատէին 722 գործաւորք, յորոց միայն 356ն մետաքսահան էին՝ թէ այր թէ կին։ Տեղական մետաքսափաթուղթ գործատանց անիւները կը շարժեն եռաժուներ առանցքերով, և այս ձեռնաշարժ անուօք հանուած մետաքսի մի պուղն կ'արժէ մինչև 200 ռուբլի։ Տարուէ տարի բոլոր այդ գործատանց մէջ իբր 200 պուղ մետաքս կը հանուի՝ 40,000 և աւելի ռուբլի արժէքով։

Մետաքսի բոժոժները երբեմն նսեւ տանց մէջ ալ կը պարզեն ու փաթուլթեն, մասնաւորապէս Նախիջեւանու բաժնին մէջ, այսպէս. կ'առնուն եռացած ջրով լի սան մի, կը լեցընեն մէջը բոժոժները և կը թողուն մինչև որ լաւ մի թրջին, ապա փոքրիկ աւելով ջրին երեսը կեցած բոժոժները շփելով՝ թելին ծայրերը աւելի վրայ կը կաշին, զորս՝ ուզած ստուարութեան համամատ՝ մէկտեղ միացընելով, կը սկսին ձեռքով կամ ճախրաւ կով քաշել մինչև որ սպառին. ասոնք տեղացի աղեկատներով մանած ու դերձանի վերածած՝ կը ծառայեն առտնին գործածութեան համար։

Մետաքսի գործատուններէն զատ կան նաեւ ծաղկալաթի (շիք) արուեստանոցներ, և ուրիշ մի քանի տեսակ գործատուներ եւս, ինչպէս՝ մորթի, ապակւոյ, կաւի (բրըտի), օճառի, աղիւսոյ և գաճի։

Սոյն վիճակացս մէջ 7 ծաղկալաթի արուեստանոց կամ լաւ եւս հասարակ կտաւատիւպ տուններ կան, և Նախիջեւան քաղաքին մէջ, 2 Որդուատ քաղաքին մէջ և մի Եայճի (Դարլղզ. վիճկ.) գիւղին մէջ։ Այդ արուեստանոցաց մէջ պարսկահպատակ արուեստաւորք փայտեայ կաղապարօք կտաւի վրայ կարմիր ու կապոյտ գունով ամենատոգեղ ձեւեր կը տպեն։

Մորթի գործատուն (դաքթախանաշ)՝ 3 Նախիջեւան քաղաքի մէջ կայ, 2 Որդուատ քաղաքի և մի վերին-Ագուլիսի մէջ. որոց մէջ հասարակ սեկ կը պատրաստեն, ներկած՝ կարմիր, շիկակարմիր, մանուշակագոյն և դեղին։

Ապակւոյ մի գործատուն Որդուատ քաղաքին մէջ կայ. որոյ արտադրած ապակեղէն անոթները խիստ գիւրբաբեկ են, որ անշուշտ պաղեցընելու թերութենէ յառաջ կու գայ։ Ապակի ստա-

նալու համար կը գործածեն սովորական գետային պտկարդի (կամ որձաքարի) և օշնայի աւազ։

Կաւային (բրուտի) գործատուներ այս կողմերս ի վաղուց հետէ եղած են, ըստ որում կաւագործութեան՝ որ և բրտութեան՝ արտադրած իրեղէնքը՝ որ և է տան առաջին և անհրաժեշտ կարեւորներէն են։ Հօս ամենեւին փայտէ անօթ գործածելու սովորութիւն չկայ՝ այլ բոլորն այլ կաւէ են, սկսեալ գաւաթէն և անոր տակի պնակէն՝ մինչեւ կերակուր եփելու սաները։ Բրուտի միակ օգնական գործին դուրգն է, որ լիսոսն վրայ հաստատուած հասարակ փայտեայ շրջանակ մ'է։ Թուով 27 կաւագործարան կայ, մին ի Նախիջեւան քաղաքի, միւսն յՈրդուատ քղ., իսկ 25 ի գիւղորէս. որոց ամենուն մէջ աշխատողաց թիւն էր 91 հոգի։

Օճառի երկու գործատուն կայ՝ որ կը գտնուին մի մի Նախիջեւան և Որդուատ քաղաքաց մէջ։ Ասոնց պատրաստած օճառը միխրագոյն է և գրեթէ ամենեւին չի փրփրիր։ Ընդհանրապէս տեղացիք օճառ չեն գործածեր, այլ անոր տեղ աղտաղտուկ (չողան) (\*) ըստած բոյսն և կաւը (քիլ). կտաւեղէնքը չողանախաշ ջրոյ մէջ կը լուան, իսկ դուխնին կաւով։

Գաճ ու կիր պատրաստող 8 գործատուն կայ, որ վանանդ և Նեգրամ գիւղերու մէջ կը գտնուին։ Ասոնք տարուէ տարի 2000 խալվար գաճ ու կիր կը պատրաստեն կիզմամբ։

Առաջ՝ աւերակները քրքրելով՝ թրծեալ աղիւսը քարի փոխան կը գործածուէր տեղական ճարտարապետութեան մէջ, բայց ներկայիս միայն հարուստներու շէնքերու համար կարծես նախապահուած են։ Աղիւսի գործատանց թիւը կտրելի չէ որոշել, վասն զի կախումն ունի տարւոյն եղանակներէն և հարկաւորութենէ։

Գործատանց վրայ խօսելով՝ յիշենք հօս նաեւ ձիթահաներ, չալտուկ մաքրող սանդեր և կալաքար ու աղբորակ հանելու եղանակը։

Նախկին ձիթահաներու մնացորդներէն կը տեսնուի թէ այս կողմերս խիստ յաճախուած էր բուսական իւղ հանել. որ աւելի եւս կը ստուգուի բնակչաց սովորութիւնը դիտելով, որք առաջ լուսաւորութեան համար միայն բուսական եղ կը գործածէին, և ոչ հիմակուան պէս՝ սեւ նաւթ ու ճարպ. բայց առաջները այնչափ մեծ քանակութեամբ եղ հանելու գլխաւոր պատճառն՝ ժամանակին վանաց և եկեղեցեաց բազմութիւնն էր, որք

\*. Salsola Kali.

գրեթէ մեծաւ մասամբ կը սպառէին զայն. այս անտի եւս յայտնի է՝ որ իւրաքանչիւր վանք իւր ձիթահանն ունէր, որոց աւերակքն դեռ եւս կեցած են, Ներկայիս յիշեալ վիճակացս մէջ ընդ ամէնն 9 ձիթահան կայ, Ասոնց կազմութիւնը խիստ պարզ է. զոյգ մի գոմէշ գազաթնահայեաց և շրջագարձ շարժմամբ կը դարձընեն աւազաքար երկան մի, իսկ երկանի տակ կը լեցընեն իւղաբեր սերմանքը, որք անոր ծանրութենէն ճմուելով զանգուած մի կը դառնան, Յետոյ այդ զանգուածէն ճնշոյցներով եղ կը հանեն. իսկ մնացորդը՝ որ է ըսել կոպտոնը, յարդի (քիշապա) հետ խառնած անանոց կու տան՝ իբր ամենալաւ կեր:

Չալտըլի սանդեր՝ ցորեն ու չալտուկ փեճեկելու կը ծառայեն, անոնցմէ կորկոտ շինելու համար: Ասոնք երկու տեսակ են, մին ոտքով և միւսն ջրով կը շարժի: Ոտնաշարժք հետեւեալ կազմութիւնս ունին. քարերով որմած փոսին քով ցից մի կը վարսեն, վրան կ'անցընեն երկաթէ ատամներ ունեցող փայտեայ մեծ ուռը, այնպէս որ մեղեխին կէսը մի կողմը կը մնայ, իսկ կէսը հանդերձ ուռամբ միւս կողմը փոսի մէջ կ'իջնէ: Գործաւորն ոտքով այդ ուռը գամ մի կ'ամբառնայ և գամ մի կ'իջեցնէ փոսի մէջ, և անոր ատամներով հատերու փեճեկը կը պատըռուտէ, զորս սանդի մէջ լեցընելէն առաջ արդէն լաւ մի թրմած են: — Զրաշարժքը ասկէց միայն այսու կը տարբերին, որ անոնց մէջ մի ուռան տեղ՝ քանի մի ուռն կայ, և փոխանակ գործաւորաց ոտքերու՝ ջրով կը շարժին:

Կալաքար հանելու համար մասնաւոր գործատուներ չկան, այլ գործաւորք՝ գլխաւորապէս պարսկահպատակք՝ ուրիշ աշխատանքէ ազատ եղած ժամանակներ, կ'ելնեն դաշտ կ'երթան, և հօն աղային բոյսերը այրելով ստացած մոխրագոյն և մեծ մեծ կտոր կալաքարը՝ վաճառադրոցը կը բերեն ծախելու:

Իսկ աղբորակ հանելու համար թէպէտ այժմ գործատուն չըկայ, բայց առաջ 1862—72 Նախիջևեանի մէջ կար. այն ատեն գործատան համար կաւը Նոյի գերեզման (բառած) մօտերը գրտնուած աւերակներէն կ'առնուին, որ յինքեան 45—50% աղբորակ կը բովանդակէր. իսկ ստացուած աղբորակը նոյն տեղը այլեւայլ անական պիտոյից կը գործածուէր:

ԱՐՈՒԻԵՍՏՔ. — Այս կողմերս արուեստք դեռ իրենց մանկութեան մէջ են, ինչպէս նաեւ բնակաց բոլոր ուրիշ գործերն: Արծաթագործը ոտքերը ծալած և կծկած՝ օրերով և մերթ ամբողջ ամիսներով կ'աշխատի ձեռքի նիւթի մի վրայ. ստաղձագործը խոնաւ գետնի վրայ նստած՝ ոտքով ու ձեռքով գործելով կը պատրաստէ իւր խոշոր ու անարուեստ գործը՝ առանց ինչ

| ԱՆՈՒԱՆԲ<br>ԱՐՈՒԵՍՏԱԽՈՐԱՑ | Նստիչներ<br>թիվներ |        | Որդու<br>թիվներ |        | Գրեթե<br>թիվներ |        |
|--------------------------|--------------------|--------|-----------------|--------|-----------------|--------|
|                          | Հայ.               | Թաթար. | Հայ.            | Թաթար. | Հայ.            | Թաթար. |
| Դեղալանառ                | —                  | —      | —               | 1      | —               | —      |
| Մուճակակար               | 13                 | 12     | —               | 32     | 22              | 5      |
| Թաղեպործ                 | —                  | 1      | —               | —      | —               | —      |
| Ճամկատիպ կուսապործ       | —                  | 26     | —               | 7      | —               | 1      |
| Բրուտ                    | —                  | —      | —               | 1      | 88              | 2      |
| Երկանակոփ                | —                  | —      | —               | —      | 64              | 4      |
| Փողար և Թմբկահար         | 6                  | —      | —               | —      | 114             | 6      |
| Երկրաչափ                 | 8                  | 2      | —               | —      | 8               | —      |
| Կրագործ                  | —                  | —      | —               | —      | —               | 8      |
| Որմնադիր (կամ զաղատոս)   | 10                 | 4      | —               | —      | 33              | 36     |
| Դարբին և նզագործ         | 38                 | 15     | —               | 48     | 57              | 23     |
| Կանդաղիչ ոսկերաց         | —                  | —      | —               | —      | 29              | 32     |
| Ներկարար                 | 4                  | 24     | —               | 8      | 20              | 19     |
| Խաղախորդ                 | —                  | 17     | —               | 28     | —               | 1      |
| Բժիշկ                    | —                  | 1      | —               | 3      | 8               | 7      |
| Անագող                   | —                  | —      | —               | 4      | 3               | 2      |
| Աղորեշէն                 | —                  | —      | —               | —      | 28              | 9      |
| Մսալանառ                 | 13                 | 16     | —               | 20     | 37              | 42     |
| Պղնձագործ                | —                  | 1      | —               | 22     | 1               | —      |
| Նկարիչ (սենեկաց և այլն)  | 3                  | —      | —               | —      | 2               | 1      |
| Օճառագործ                | 2                  | —      | —               | 3      | —               | —      |
| Զինագործ                 | 8                  | —      | 4               | —      | 9               | —      |
| Համեմատագործ             | 1                  | 3      | —               | 5      | 2               | 11     |
| Դերձակ                   | 22                 | 5      | 1               | 2      | 14              | 7      |

| ԱՆՈՒԱՆՔ<br>ԱՐՈՒԵՍՏԱԿՈՐԱՑ                    | Նախնական<br>քաղաքին ձև.  |        | Որդու<br>քաղաքին ձև. |        | Գիւղի<br>ձև. |        |
|---------------------------------------------|--------------------------|--------|----------------------|--------|--------------|--------|
|                                             | Հայ.                     | Թաթեր. | Հայ.                 | Թաթեր. | Հայ.         | Թաթեր. |
| Հնակարկատ                                   | —                        | 10     | —                    | 5      | 5            | 11     |
| Սփրիդագործ                                  | —                        | —      | —                    | —      | 12           | —      |
| Կազմող սարից զրաստուց                       | —                        | 5      | —                    | 3      | —            | —      |
| Արծաթագործ                                  | 7                        | 4      | —                    | 5      | 52           | 3      |
| Մումագործ                                   | —                        | 2      | —                    | 2      | —            | —      |
| Կօշկակար                                    | 6                        | —      | —                    | —      | 1            | —      |
| Ատաղձագործ և ճակարակագործ                   | 23                       | 2      | —                    | 6      | 175          | 54     |
| Ոտայնանկ                                    | 3                        | —      | —                    | —      | 678          | 232    |
| Փալաւահիւս (*)                              | —                        | —      | —                    | —      | 284          | 976    |
| Ջրկիր (թռչողափ)                             | —                        | 2      | —                    | 4      | —            | —      |
| Գզող                                        | —                        | 4      | —                    | 8      | 104          | 35     |
| Պանդոկապետ                                  | 4                        | 10     | —                    | 3      | —            | —      |
| Սափրիչ                                      | 4                        | 12     | —                    | 5      | 48           | 89     |
| Տրեխարար                                    | —                        | 16     | —                    | 13     | —            | —      |
| Ժամացուցագործ                               | 1                        | —      | —                    | —      | —            | —      |
| Թէյալճառ                                    | 1                        | 13     | —                    | 3      | —            | 2      |
| Մետաքսափաթուծ                               | —                        | —      | 83                   | 177    | 26           | 70     |
| Գլակագործ                                   | —                        | 10     | —                    | 3      | 6            | 9      |
| Կարմիր ներկող (Շիւղալի)                     | —                        | —      | —                    | —      | 29           | —      |
|                                             | 177                      | 219    | 88                   | 426    | 1959         | 1697   |
| 1. Այժմ մազով հիւսուած կապերս.<br>(Բաւ աճ.) | 396                      |        | 541                  |        | 3656         |        |
|                                             | (Հայ 2224 + 2342 Թաթեր.) |        |                      |        |              |        |
|                                             | Բոլորն 4566 անձ.         |        |                      |        |              |        |

յուսաջադիմութեան և ամենեւին նման իրմէ դարերով առաջ ապրող համարուեստ տընողի մի. դանակագործը, դարբինը, մուճակներ շինողը (Ֆաշմախյի), գդակագործը, (Յորկի), սափրիչն և այլ արուեստաւորք գեռ եւս կը շարունակեն իրենց գործը առանց կէտով մ'իսկ խոտորելու իրենց հարց և պապերու աւանդածէն: Գաւառիս մէջ զբաղմունք մի իւր կատարելութիւնն կամ գոնեա բարւոքումը չ'ունի, թէ և արուեստը հայ բնակչաց սիրելագոյն առարկայն են: — Առաջիկայ տախտակս կը ներկայացընէ այս կողմերս ծանօթ արուեստներով զբաղող արուեստաւորաց թիւը. — Տես յ'էջ 283:

Ինչպէս սոյն տախտակէս կը տեսնուի՝ յիշեալ արուեստներով զբաղող անձանց թիւն է 4,566, յորոց 2,224 Հայ է և 2,342 Թաթար: — Բոլոր արուեստաւորք ի միասին բնակչաց այրական սեռին գրեթէ իբր 8<sup>1</sup>/<sub>2</sub> % մասն կը կազմեն:

**ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.** — Երկրիս այս անկեան վաճառականութեան մասին գրեթէ պատմական տեղեկութիւն չկայ, թէ պէտ հին քաղաքաց աւերակք և տեղւոյն բնակչաց աւանդութիւնքը այլեւայլ դաձրաց և ռաշդակեարաց (վաճառական) համար, կը վկայեն՝ թէ հօս երբեմն վաճառականութիւնը բնակչաց պըսակն եղած է: Չկայ հիմայ այն հռչակաւոր քաղաքն Ջուլայ<sup>(1)</sup> (Ճուլփա) իւր առաջնակարգ վաճառականներով, որոց հետքերը ցանուցիր սփռուած են Երասխի ձախ ափունքի վրայ՝ այժմեան Ճուլփայի մօտերը և անտրտունջ կը կրեն ամենազգի հարուած՝ այն երբեմն աղմկալից կարաւանատանց և այն արուեստանոցաց փլածքն՝ ուր համբերութեամբ հայուն ձեռքն ընկերական կենաց կարեւոր եղածները կ'արտագրէր, ... և միայն անշունչ և անջինջ գրերը մնացած են, իբրու անլուելի վկայք քաղաքիս նախկին մեծութեան: Անհետ աներեւոյթ եղան նոյնպէս և Ագուլիս, Սալարի, Ճազրի, Ապրակունիս և Երնջակ աւաններն, և անոնց տեղ երեւցան փոքր ու աննշան գիւղակներ բուն մի նորեկ բնակչք, բաց ի Ագուլիսէն՝ որոյ բնակիչք մինչեւ ցարդ վաճառականութեամբ կը զբաղին: Իսկ Նախիջևանը. և մի՞ թէ նա չէ՞ր այն օրն, եթէ կարելի է այսպէս ըսել, որ բոլոր յիշեալ անհետացած քաղաքներն ու աւանները միասին կու կապէր ու միացընէր. մի՞ թէ նա չէ՞ր միջնորդ՝ վաճառականութեան տեսակիտով ընդ մէջ Պարսկաստանի և Անդրկովկասու, Բաղդն ու զեց հռովմայեցւոց, մակեդոնացւոց, յունաց, պարսից և այլ բազ-

1. Այլ դնելով քաղաքիս անուան նշանակութեանը, շատ հաւանական է թէ յառաջ եկած լինի բնակչաց չուխայի շինութեամբ կամ վաճառականութեամբ պարապէն: Հեղ.



| ԳՈՐԾԱՏԵԱՐՔ                       |        |                   |        |                |        | ԳՈՐԾԱՏԵԱՐՔ  |                             |        |                   |        |                |    |     |
|----------------------------------|--------|-------------------|--------|----------------|--------|-------------|-----------------------------|--------|-------------------|--------|----------------|----|-----|
| Նախնական տար. հիշ.               |        | Որդական տար. հիշ. |        | Գիւղերում հիշ. |        | Խոռոպականոյ | Նախնական տար. հիշ.          |        | Որդական տար. հիշ. |        | Գիւղերում հիշ. |    |     |
| Հայ.                             | Քաղվր. | Հայ.              | Քաղվր. | Հայ.           | Քաղվր. |             | Հայ.                        | Քաղվր. | Հայ.              | Քաղվր. |                |    |     |
| Մանրալսման <sup>1</sup> (Առտար). | —      | 55                | —      | 23             | 4      | 7           | Բլբլայական                  | —      | 3                 | —      | 3              | —  | —   |
| Սերմնալսման (Ալլախ).             | 12     | 33                | 1      | 16             | 4      | 2           | Մորթալսման                  | —      | 2                 | —      | 5              | —  | —   |
| Համբարան                         | —      | —                 | —      | 4              | —      | —           | Փերեզակ                     | —      | 1                 | —      | —              | —  | —   |
| Կտաւալսման (Բաղալ).              | 54     | 40                | —      | 36             | 15     | 9           | Զի բանեցնող (Զարկաւար)      | —      | —                 | —      | —              | 19 | 10  |
| Պարտալսման (Բակկալ).             | —      | 82                | —      | 35             | 10     | 35          | Կտաւալսման (Փարբրունջի)     | 2      | —                 | —      | —              | 2  | 361 |
| Վանաւարիւ (Գալլալ).              | —      | 1                 | —      | 1              | —      | —           | Երկաթ, գորգ և չաւան վանաւոյ | 2      | 3                 | —      | —              | —  | —   |
| Խանութան                         | 28     | —                 | 6      | —              | 17     | —           |                             |        |                   |        |                |    |     |
| Սպանդ <sup>2</sup> Բորեցնող.     | —      | 6                 | —      | 4              | —      | —           |                             |        |                   |        |                |    |     |
| Վանաւական                        | 23     | 1                 | 4      | 3              | 8      | 1           |                             |        |                   |        |                |    |     |
| Լուսնայիւ                        | —      | 1                 | —      | 4              | —      | —           |                             |        |                   |        |                |    |     |
| Կաւերիւն առնութեւր վանաւոյ       | 1      | 8                 | —      | 3              | 1      | —           |                             |        |                   |        |                |    |     |

|                                                                       |     |     |     |    |     |
|-----------------------------------------------------------------------|-----|-----|-----|----|-----|
| 1. Հանգուռնիք. խոնկ և ուլ ածուշահոտ ծխածխիկ վանաւոյ. (թու. ուլ. բոյ). |     |     |     |    |     |
| 2. Բաւոյ սիւ հասերը զբ. Թաթաղ Բորեցնուլ. խոնկ տեղ. 422 գործածածու     |     |     |     |    |     |
| 1922                                                                  | 236 | 11  | 137 | 81 | 425 |
| 358                                                                   |     | 348 |     |    | 506 |
| (Հայ 214 + 798 թաթալ).                                                |     |     |     |    |     |
| 1012 տն.                                                              |     |     |     |    |     |

գի միջնասիոյ վայրենի ժողովրդոց բուռն բազկով՝ այդ վաճառականութեան կեդրոնները փոխել ի շեղակոյտս աւերակաց, և զբնակչան ցանաքիւր սփռել ընդ ամենայն աշխարհ:

Ներկայիս այդ տեղեաց վաճառականութիւնը խիստ աննշան է, և գլխաւորապէս ներսը կեդրոնացած, ուր միայն չորս տեղ վաճառանոց կայ, Որդուատ ու Նախիջևան քաղաքաց և վերին Ագուլիս ու Ճաղրիս գիւղերու մէջ: Բայտ արտաքին երեւութին ընդհանրապէս այդ վաճառանոցք նման են քառակուսի կամ բուրջի կարաւանատանց, որոց չորս կողմը շարուած են փոքր ու ցած իւձիւք (խանութք), վեր ու վար շարժող մեծ դռներով, փողոցաձեւ ու վրան ծածկուած չարսիք (չարք մի խանութներ)՝ երկու կողմը միջակ խանութներով, հրապարակներ՝ լի յաւերժական տղմով ու վաճառողաց շարժուն կրպակներով, պանդոկներ և ախոռներ, ահաւասիկ տեղոյս վաճառատեղեաց բովանդակ կազմութիւնն: Գիւղական բերքերու վաճառականութեան գլխաւոր կեդրոնն է Նախիջևան քաղաքը, ուր բնակիչք իրենց բերքերէն մեծ շահ մի չգտնելով, կը ջանան կարեւոր բաները ուրիշներէ ամբարել: Այդ կարեւորաց մէջ ամենէն առուտուրի նիւթ եղած են դեղորայք և բամբակաթղթոյ գործուածքներ, ինչպէս են՝ ծաղկալաթ, ամերիկեան կտաւ, և այլն: Իսկ թանկագին կամ ազնիւ տեսակ վաճառքները, նոյնպէս նաեւ թէյ, չաքար և սուրճ գնողները միայն քաղաքացոց մէջ կը գտնուին. բայց կը տեսնուի որ սակաւ սակաւ թէյ, չաքար և ուռս գործատանց արտադրած յախճապակեայ անոթներն՝ նաեւ գիւղերու մէջ այլ գործածութեան կը մտնեն:

Թէ քաղաքաց և թէ գիւղերու մէջ հետեւեալ գործատեարք կը գտնուին, իւրաքանչիւրն զանազան կարեւորաց խնամքով պարապած. — Տես յ'էջ 286:

Տախտակէս կը տեսնուի որ ընդ ամէնն բոլոր ճարտարք 1012 հոգի են, յորոց 214 Հայ, մնացեալքն թաթար: Եթէ յաւելունք ասոր վրայ նաեւ նախկին ցուցակի մէջ նշանակուած արուեստաւորաց բոլորական թիւն, կը լինին 5,578 հոգի. որ գրեթէ բովանդակ բնակչաց այրական սեռին մի տասնորդ մասն է: Վաճառանոցներէն դուրս առուտուրը փերեզակաց (չարի) ձեռքով կը կատարուի, որ մեծաւ մասամբ պարսկաստանցի Հրէայք են: Ասոնք իրենց վաճառքք գիւղէ գիւղ շրջեցրնելով աւելի փոխանակութեան առուտուր մի կ'ընեն, փոխելով իրենց ունեցածը՝ պանրի, եղի, կաշւոյ, բամբակաթղթի, բրդոյ, ցորենոյ, գարւոյ և նմանեաց հետ: Չկայ գիւղ մի ուր չբնակի եւրպայեցի կամ հայ փերեզակ մի, որ բոլոր բնակիչները մատի

վրայ կը խաղցընեն։ Արտասահման վաճառականութիւնը՝ գրեթէ ամենեւին չէ մտած. հօս դուրս տարուելու բաներ են՝ բամբակաթուղթ, մետաքս, անասուն, ցորեն և այլն։ Վերջին երեք նիւթերս՝ անասուն, ցորեն ու գարի, մասնաւորապէս Պարսկաստան կը աարուին, և աւելի այն տարիներ երբ հօն սով կը լինի, որ՝ ինչպէս կ'ըսեն՝ այն աշխարհին պարբերական հիւանդութիւն մի համարուած է։ Բամբակաթուղթն ու մետաքսը կը տարուի Մոսկուա և յԵւրոպէ, մանաւանդ ի փոանկաստան, իսկ սոյն վիճակներէս մերձակայ աւաններու կը տարուին՝ չոր մրգեղէնք, ցքի և գինի։

Հիմայ մի քանի խօզը այլ՝ երկայնութեան, ծանրութեան, հեղուկաց և այլ չափուց նկատմամբ ըսենք, որ թէ վաճառականութեան և թէ առտնին գործոց մէջ կը գործածուին։

Վաճառականութեան մէջ երկայնութեան չափերէն երկու տեսակ արշին են, ռուսական և խանական. և ռուս արշինը գեթ թաթարաց և գիւղերու բնակչաց մէջ մտած չէ. խանական արշինը  $2\frac{1}{3}$  բթաչափի կը հաւասարի, և հետեւապէս  $\frac{1}{6}$  բթաչափ փոքր է փոանկաց մետրէն, և կը բաժնուի 16 մաս։

Կշոռց ամենէն փոքրագոյն միութիւնն է կուտ՝ ըստ տեղացւոց Նօննդ (սիսեռ), ուստի.

| Չափը Տեղացւոց.             | Չափը Ռուսաց՝                    | Չափը փոանկաց.   |
|----------------------------|---------------------------------|-----------------|
| 1 Խօււղ                    | = . . . . . 3 Կուլեայ           | 0.4533125 գրմ.  |
| 28 Կ'ընէ Խօււղնդ մէկ Բիււլ | = . . . . . 84 "                | 3. 73273 գրմ.   |
| 50 մսխալ " " Խօւլիւ        | = . . . . . 43 զուլտոնիկ և 72 " | 186. 6373 գրմ.  |
| 4 Խաթիւ " " Բէւո           | = 1 փուլտ և 79 "                | 746. 73276 գրմ. |
| 2 Բիւս " " Երբ             | = 3 " " 62 "                    | 1403. 1 գրմ.    |
| 2 Երբ " " Երբ              | = 7 " " 28 "                    | 2986. 2 գրմ.    |
| 4 Երբ " " Երբ              | = 29 " " 26 "                   | 11944. 8 գրմ.   |

Բայց գործադրութեան մէջ՝ պաղմանն կամ մանր միշտ 28 փուլտ և 64 զուլտ. չէ, այլ տեղ տեղ նաեւ 36 փուլտ. ընդհանրապէս այս չափերը այլ եւս գործածական չեն, թէ և գիւղացւոց մէջ ցանցառ գործածողներ ալ կը գտնուին։

Հատեւոր կամ չոր նիւթեր չափելու համար կը գործածուին նօտ, սօմար և ման։ Թէպէտ ասոնք նոյնիմաստ բառեր են՝ բայց զանազան կշիւք ունին։ Նախ մանը որ քանի մի տեղ 32 փուլտ

կը համարուի, ուրիշ տեղեր 36 փունտ կը կշռէ. իսկ սօմարն ու նօտը՝ որ Դարապաղըզի և Որդուատու վիճակաց մէջ կը գործածուին՝ 10—12—13 փունտ կը կշռեն. Այս չափերը վաճառականութեան մէջ չեն գործածուիր:

Հեղուկները հօս պարունակութեամբ չեն չափեր՝ ինչպէս որ այդ ընդունուած է վրաստանի մէջ, այլ կը կշռեն. ուստի իբր միութիւն կը ունենայէ պաթմանը, որուն վերջերս պուգ-փոխանակեց: Ասոր համար մի անգամ որոշեալ ամանի մի բովանդակած հեղուկը կշռելով, այնուհետեւ այն ամանը կը լինի նոյն հեղուկին մշտնջենաւոր չափը:

Ժամանակ չափելու համար՝ ինչպէս յայտնի է՝ ժամացոյցներ կան, որք դեռ իննական կենաց ծանօթ չեն. ասոնց առտնին կենաց համար ժամացոյցք բնաւ նշանակութիւն չունին, բայց դաշտերն ոռոգելու ջրոց բաշխման ժամանակ՝ կարգէ դուրս ասոնց կարօտութիւն կը զգան. Այդ անհրաժեշտ պէտքը դրդած է զանոնք հինօրինակեայ ժամացոյցներ գտնելու. Այդ նախաձրհեղեղեան ժամանակաչափուց մեքենականութիւնն ամենապարզ է. կ'առնուն կաւէ թաս կամ պնակ մի՝ մէջտեղը ծակով, ծառի վրայէն կը կախեն և կը լեցընեն՝ մէջը մաքուր ջուր, որ ծակէն դուրս վազելով ժամանակը կ'որոշէ. տեղ տեղ ալ փոխան ջրոյ՝ թասի մէջ մանր աւազ կը լեցընեն, միայն թէ այն ատեն հոսման ծակը սակաւ մի լայն կը բանան: Բաց ակէ, ժամանակը չափեն նաեւ այլեւայլ առարկայից շուքէն, և շատ հեղ ալ տարիքն առած միջահասակ մարդուն իսկ շուքը կը չափեն ոտից գարշապարով. Գիշեր ատեն ժամանակը կը չափեն լուսնի և զանազան աստեղաց ելլելէն ու մտնելէն. ինչպէս նաեւ արեւու, լուսնի և աստեղաց հորիզոնի վրայ բարձրացած միջոց պահած հեռաւորութենէն: Ասոր համար բնակչաց մէջ կան այս տեսակ բացատրութիւններ. «Երբ արեւը գլխուս վերեւ էր» կամ երբ լուսնի աւտդը մի ջիւալի թոյի էր (\*): Շատ կամ սակաւ երկարութեամբ ժամանակներ կը սահմանեն եկեղեցական կամ ժողովրդական հօնդէսէ մի մինչեւ միւս հանդէսը. իսկ ամենէն երկայն ժամանակի շրջաններ կը հաշուեն համաճարակ հիւանդութենէ մի, ինչպէս՝ մաղձախտ, ժանտամահ, կամ երկրաշարժէ. կ'ըսեն՝ օրինակի համար. եւ ճնոռել եւ ազարի (մեծ մաղձախտի) տարին, կամ ծաղկի տարին եւ եօթ տարեկան էի, և այլն:

Իսկ քառակուսի կամ խորանարդ չափուց մասին բնակիչք ամենեւին ծանօթութիւն չունին. ուստի դաշտեր չափելու համար՝

\* Երբ աստղ մի նիգակալափ բարձրացած էր: Բացատր. հեղին.

սերման (բայց միայն ցորենի) այսչափ ինչ քանակութիւնը՝ (որ սերմանելու ատեն որոշեալ չափով երկրի բաժին մի կը պահանջէ)՝ կ'առնուի իբր միութիւն։ Ըստ այսմ՝ սովորաբար երկիր չափելու համար գործածուած քառակուսի չափերն՝ հօս կշիռն երով փոխանակուած են, որով մշակուած երկիրն՝ (փոխան արշինի և օրավարի)՝ խալվարով, պաթմանով և այլն, կը չափուի ու կ'որոշուի։ Բայց բնակչաց մէջ կը գտնուին և խելացիք՝ որ զայն քառակուսի չափերով կը չափելով են։ Հովտային տեղերը մանն ու պաթմանը չափելու համար՝ խանական 26 արշին լայն ու երկայն երկրի բաժին մի կ'որոշեն, որ 676 քակ. խանական արշին կ'ընէ։ այսպիսի 25 քառակուսիք կը կազմեն խալվար (\*) մը։ Լեռնակողմանց համար պաթմանի մի լայնքն ու երկայնքն 28 խանական արշինի պէտք է հաւասարի։ Իսկ եռանկիւնի տարածութիւն (մակերեւոյթ) մի՝ հետեւեալ կերպով կը չափուի. եռանկիւնոյ ամէն կողմանց մեծութիւնը կը գտնեն, կը գումարեն և չորս մաս կը բաժնեն, և չորս մասերէն մէկը ինքն իրմով կը բազմապատկեն։ այսպէս՝ օրինակի համար, ըսենք որ եռանկիւնոյ մի ամէն կողից մեծութիւն մէկտեղ 40 արշին է, չորրորդ մասն կը լինի 10 արշին. ուստի եռանկիւնի մակերեւութին բովանդակ մեծութիւնը ստանալու համար՝ 10ը բազմապատկելով 10ով, կը լինի 100 քառակուսի արշին։

Շարունակելի

## ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԳԻՐԲ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՄԻ։— ՆԻԿ. ՄՈՒ ԿԱՅԱԳԻՏԻՄ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՅՍ ԳՐՈՒԱԾՔԻՆ ՎՐԱՅ

(Տես ի՛նչ 247)

ԺԲ

«**ՅԱՂԱԳՍ** փոխելո՛ւ նոցա անդ(ի), և գնալ յերկիրն Ասորեստանու » : — ՅԱՍՐԵԱՍՏԱՆԷ ճանապարհորդքս ուղղուեցան յերկիրն Քանանու. հոն ի Մաթիամ քաղաքի Ժողովեցան խորհուրդ ըրին տղայք՝ զվեցամեայ մանուկն Յիսուս չարչարելու

\*. Խալվար մի հաւասար է  $1\frac{1}{2}$  ուռս օրավարի՝ (զոր բնակիչք կազ կ'անուանեն) Ն. Վ. Խանիկովի հետ մի խանական արշին մի 22 վերջով (0. 9768 մե. տրը) համարելով։